Հաղորդարար - Հարգելի ռադիոունկնդիրներ, ընթերցող և գիտական հասարակայնության սեղանին է դրված մեր հոգելույս Հայրապետի՝ Նորին Սուրբ Օծություն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տեր Տեր Վազգեն Առաջինի գրական-հրապարակախոսական ամբողջ ժառանգությունն ամփոփող «Մատենագիտություն» խորագիրը կրող աշխատությունը, որը հրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում այս՝ 1995 թվականին։ Այն հեղինակել է բանասիրական գիտությունների թեկնածու, Հանրապետության պետական մրցանակի դափնեկիր Սուրեն Շտիկյան-Վանեցին, մեկը, որն արդեն տասներեք տարի ուսումնասիրում է հանգուցյալ Հայրապետի արգասավոր կյանքն ու գործը։ Հիշատակված «Մատենագիտության» առիթով, ահա, խմբագրությունը նպատակահարմար համարեց հարցազրույցի հրավիրել հեղինակին, մի քանի հարցերի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար։

Մեր առաջին հարցը. պարոն Սուրեն-Վանեցի, աշխատանքային-ստեղծագործական ինչպիսի ճանապարհ է անցել Վազգեն Վեհափառի՝ ձեր կազմած «Մատենագիտությունը»։

Ս. Շտիկյան-Վանեցի – Հարցի բանասիրական պատմությունը ծայր առավ 1990 թվականի գարնանից, երբ Մայր Աթոռի տպարանում նոր-նոր էր հրատարակվել իմ նախորդ՝ «Վազգեն Ա. Կաթողիկոս. Ժամանակագրություն» աշխատությունը, և այդ գիրքը ձեռքիս մտա Վեհափառ Հայրապետի առանձնասենյակը։ Հավուր պատշաճի համառոտ խոսակցությունից և Նորին Ս. Օծության մակագրությամբ գիրքը նվեր ստանալուց հետո, անհամարձակ սկսեցի ասելիքս, որի գաղափարը մտքումս վաղուց էի փայփայում. «Վեհափառ Տեր, որոշել եմ կազմել Ձեր հոդվածների ու առանձին հրատարակված աշխատությունների գիտական մատենագիտությունը, որի պակասը զգացվում է մեծապես։ Խստիվ ժամանակագրական կարգով մեկ առ մեկ պետք է նշվեն ձեր հոդվածները, գիտական աշխատությունները, թարգմանությունները, անհրաժեշտության դեպքում կտրվեն համապատասխան բնութագրականներ»։

Հայրապետական համեստությունը հայտնի էր բոլորիս, ուստի ամենևին էլ չզարմացա, երբ ստացա հենց այն պատասխանը, որը սպասում էի. «Մեր գործերի մատենագիտությո՞ւնը։ Է՛հ, դա պե՞տք է որ...»։

Ծայր առավ ամենաիսկական գիտական քննարկում։ Երկուստեք բերեցինք ոչ քիչ թվով փաստեր ու փաստարկումներ, սակայն բանավեճի ամբողջ տևողության ընթացքում ներքին գոհունակությամբ նկատում էի, որ աստիճանաբար կարողանում եմ համոզել Վեհափառին։ Ի վերջո, Հայրապետական այնքան բնորոշ համաձայնողական-զիջողական ժպիտը և, մանավանդ, որպես վերջաբան ասված «Դե լավ, վերջացնենք։ Պարոն Սուրեն, ե՞րբ եք մտածում գործը սկսել»-ը, արդեն ոչ մի կասկած չթողեց, որ ամեն ինչ ավարտվեց հօգուտ իմ առաջարկության։ Հետագա հանդիպումներից մեկի ժամանակ էլ ճշգրտվեց աշխատանքս ավարտելու ժամկետը՝ քանի որ 1995 թվականի սեպտեմբերի 20-ին լրանալու էր Վեհափառ Հայրապետի գահակալության 40-ամյակը, որն, ի դեպ, նախատեսվում էր նշել մեծ շուքով ու հանդիսությամբ, ապա այդ ժամանակ էլ իմ կազմելիք «Մատենագիտությունը» պետք է արդեն հրատարակված լիներ։ Ինչպես դժվար չէ մակաբերելը, աշխատանքի ժամկետներն ինձ համար բավականին սեղմ էին։

Աշխատանքային ամբողջ գործընթացս գտնվում էր Նորին Սուրբ Օծության անմիջական հսկողության ու ղեկավարության ներքո։ Վազգեն Վեհափառը խնամքով կարդում էր «Մատենագիտության» մեքենագիրը, որը հատված առ հատված ես ներկայացնում էի նրան, անում էր մեկից ավելի շահեկան դիտողություններ, լրացումներ ու պարզաբանումներ, և ոչ ոքի համար արդեն կասկած չէր մնում, որ Հայրապետական գործերի «Մատենագիտությունը» նախորոշված ժամանակին, այսինքն՝ 1995 թ. սեպտեմբերին կհասնի ընթերցողներին։

Սակայն իրար հաջորդած չարագույժ դեպքերի շարանը եկավ իր անողոք ուղղումները մտցնելու իմ աշխատանքների մեջ։

Վեհափառ Հայրապետի աստիճանաբար վատացող առողջական վիճակը, ապա բուժման նպատակով երկարատև մեկնումը արտասահման, վերադառնալուց հետո էլ՝ Երևանի հիվանդանոցներում տևականորեն շարունակվող և, ավա՜ղ, ոչ մի հույս

չներշնչող բուժումները, և չարաբաստիկ օրվա՝ 1994 թ. օգոստոսի 18-ի վրա հասնելը, երբ Նորին Սուրբ Օծությունը կնքեց իր մահկանացուն, ավելի դժվարացրին իմ վիճակը։ Հետագայում ծավալված դեպքերը՝ Կաթողիկոսական տեղապահի ընտրությունը, նրա ծավալած գործունեությունը, Ամենայն Հայոց նոր կաթողիկոսի ընտրության նախապատրաստությունը, համապատասխան թեկնածուների առաջքաշումն ու նրանց շուրջ ծայր առած ընտրապայքարը, Նոր Կաթողիկոսի ընտրությունը և այլն, ինձ բերեցին այն մտքին, որ այսպիսի իրադրությունների պայմաններում շատ էլ բարեպատեհ չէ Հայրապետական «Մատենագիտության» մասին խոսք բանալը։ Թեև, անկեղծորեն ասած, աշխատանքային իմ գործունեությունը շարունակում էի և գործը կարողացա ավարտին հասցնել։

Դրությունը հիմնիվեր փոխվեց 1995 թ.. ապրիլից, երբ Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Տեր Տեր Գարեգին Առաջինը ինձ հրավիրեց իր մոտ և կամք հայտնեց տեղեկություններ ունենալ Վազգեն Կաթողիկոսի «Մատենագիտության» մասին։ Զեկուցեցի նորաօծ Վեհափառին, որ աշխատանքն արդեն ավարտված է, մեքենագրված և հավելեցի, որ Վազգեն Կաթողիկոսն անձամբ հանգամանորեն նայել է նյութը, արել հարկավոր դիտողություններ ու լրացումներ, որոնք, հասկանալի է, ինձ մոտ հաշվի են առնված։ «Վաղը բերեք մեքենագիրը», ինձ լսելուց հետո հրահանգեց Գարեգին Վեհափառը։

Հաջորդ օրը թղթապանակը հասցրեցի Վեհափառին և հազիվ մեկ շաբաթ անց, Հայրապետական «Ի տպարան՝ շարվածքի. շտապ» մակագրությամբ թղթապանակս իջավ արտադրություն։ Եվ հենց այստեղ էլ նորընտիր Կաթողիկոսը անբեկանելի մի պայման դրեց. գիրքը ընթերցողների սեղանին պետք է լինի ոչ թե 1995 թ. սեպտեմբերի վերջին, ինչպես նախապես որոշված էր, այլ Վազգեն Կաթողիկոսի մահվան տարելիցի ժամանակ՝ 1995 թ. օգոստոսի 18-ին։ Եվ տպարանային-աշխատանքային եռանդալից գործունեությունից հետո «Մատենագիտությունը», իրոք, նշված ժամկետին հասցվեց ընթերցողներին։ Դա գեղեցիկ քայլ եղավ Մայր Աթոռի նորընտիր գահակալի և ողջ միաբանության կողմից, իրենց հարգանքը մատուցելու հանգուցյալ Կաթողիկոսին, նրա մահվան տարելիցի առթիվ։ Օգտվելով բարեպատեհ առիթից, ցանկանում եմ իմ խոնարհ

շնորհակալությունը հայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Տեր Տեր Գարեգին Առաջինին մեծ հոգատարության համար, շնորհակալություններս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի տնօրեն պարոն Նիկողոս Հաջյանին և փոխտնօրեն պարոն Դերենիկ Սիրեկանյանին, «Մատենագիտության» խմբագիր տիկին Ժաննա Ադոնցին և էլի ուրիշների, իրենց եռանդաշատ ու բարեխիղճ աշխատանքի համար: Ավելացնեմ, որ գիրքը հրատարակվել է հազար օրինակ տպաքանակով, գինն է 1500 դրամ և առայժմ վաճառվում է Էջմիածնի Մայր Տաճարում:

Հաղորդարար – Պարոն Սուրեն, հիմա խնդրում եմ ներկայացրեք ձեր կազմած «Մատենագիտությունը» մեր ռադիոունկնդիրներին :

Ս.Շտիկյան-Վանեցի – Հայազգի կրթական-մշակութային գործիչների մատենագիտությունների պատրաստումն ու հրատարակությունը մեզ մոտ բավականին հին պատմություն և գործնականում արդեն ճշգրտված ավանդույթներ ունի: Հիշատակենք թեկուզ Հրաչյա Աճառյանի «Կենսամատենագիտություն» (Երևան, 1956 թ.), Գրիգոր Ղափանցյանի (անդ, 1959 թ.), Արտաշես Կարինյանի (անդ, 1977 թ.), Լևոն Խաչիկյանի (անդ, 1991 թ.) և էլի ուրիշների համաբնույթ աշխատությունները: Բոլորովին վերջերս, 1995 թվականին Երևանում հրատարակվել են ակադեմիկոսներ Էդուարդ Ջրբաշյանի և Վաչե Նալբանդյանի մատենագիտությունները: Իմ կազմած Վազգեն Ա. Կաթողիկոսի «Մատենագիտությունը» արտաքուստ չի տարբերվում այս շարքի իր նախորդներից և նույն կառուցվածքն ունի: Այսինքն՝ առաջին հերթին տրված է մեր հոգելույս Հայրապետի գործունեության ամփոփ բնութագրությունը, ապա հաջորդում է նրա արգասալից կյանքի հիմնական տարեթվերը արտապատկերող ժամանակագրական ցուցակը, սրան էլ հաջորդում է տվյալ ժամանակի պարբերականներում 1933-1992 թվականների տարածքում հրատարակված մեծ ու փոքր հոդվածների, թարգմանությունների մատենագիտությունը, սրան էլ, վերջապես, «Առանձին ուսումնասիրություններ» ենթախորագրի ներքո, հաջորդում է Վեհափառ Հայրապետի՝ այդ բնույթի աշխատությունների ժամանակագրական ցանկը: Ինչպես և իմ նախորդների մոտ, գիրքն ավարտվում է եղած նյութը ներկայացնող «Այբբենական ցանկով»:

Հաղորդարար – Այդքանով միայն կամ, ինչպես դուք ասացիք, արտաքնապես, պահպանել եք կառուցվածքային բնույթի նմանությունները նախորդ մատենագետների համաբնույթ աշխատությունների հետ։ Իսկ որոնք են տարբերությունները։

Ս. Շտիկյան-Վանեցի – Հարցին սպառիչ պատասխան տալու համար նշեմ երկու կարևոր հանգամանք։ Նախ այն, որ հայ ժողովուրդը իր բազմադարյա գոյության ընթացքում ունեցել է 131 կաթողիկոս, և այսօրվա դրությամբ այդ 131 կաթողիկոսներից միայն մեկը՝ Վազգեն Վեհափառն է, որն ունի իր աշխատությունների մատենագիտությունը։ Նախորդ կաթողիկոսներից և ոչ մեկը համանման բնույթի գործ չունի, և այս կապակցությամբ իմ կազմած «Մատենագիտությունը» իր նախորդը չունի։ Ապա, արդեն ասացի, որ տարիների ընթացքում մատենագրվել է մեր գրականության ու մշակույթի շատ ականավոր գործիչների թողած գրական ժառանգությունը, բայց նրանք բոլորը առանց բացառության, եղել են աշխարհիկ գործիչներ՝ աշխարհականներ։ Հոգևոր դասի ներկայացուցչի և այն էլ բարձրաստիճան հոգևորականի աշխատությունների մատենագրությունը առ այսօր արվել է առաջին անգամ, և այս տեսակետից էլ «Մատենագիտությունը» նախորդ օրինակը չունի։ Այս երկու կարևոր հանգամանքներն էլ, ահա, բերում են այն հատկանշական առանձնահատկությունները, որոնք առկա են Վազգեն Առաջին կաթողիկոսի՝ իմ կազմած «Մատենագիտության» մեջ։ Գրքի առաջին՝ «Եւ գործք նորա իբրեւ զկայծակս» գլխում տրված է Վազգեն Վեհափառի գրական-մշակութային, հրապարակախոսական, խմբագրական, թարգմանական գործունեության վերլուծությունը։ Վեր է հանված գեղարվեստական մտածողության այն համակարգը, որը բնութագրական է Նորին Սուրբ Օծության համար և այդ հենքի վրա արված են գրական և տեսական-գրականագիտական համապատասխան եզրակացություններ։ Ինչպես հայտնի է, Վազգեն Կաթողիկոսի կրոնական-հոգևորական գործունեության, կամ նրա կատարած արտասահմանյան ուղևորությունների, կամ նրա ծավալած շինարարական և ազգապահպանիչ աշխատանքների և նման այլ խնդիրների մասին գրվել է բազմիցս, բայց նրա գործունեության վերլուծությունը այն կտրվածքով, որն արդեն ասացի, կատարվել է առաջին անգամ։ Երկրորդ՝ «Վազգեն Առաջին Կաթողիկոսի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը» բաժնում, շարադրելով հանդերձ Վեհափառ

Հայրապետի 86-ամյա կյանքի արժանահիշատակ թվերը ըստ ժամանակագրական հաջորդականության, շեշտը, սակայն, դրված է նրա գրական-մատենագիտական գործունեության վրա, նրա գրական կապերը առաջին հերթին ներկայացնելու վրա։ Ընթերցողը տվյալներ կունենա Վազգեն Կաթողիկոսի և Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Մարտիրոս Սարյանի, Էդուարդ Թոփչյանի, Սերո Խանզադյանի, Վիլյամ Սարոյանի, Արթուն Հաղիդյանի, Համաստեղի, Սիլվա Կապուտիկյանի, Պարույր Սևակի և այլոց հետ կայացած Հայրապետական բազմազան ու բազմաբնույթ հանդիպումների մասին։ Երրորդ բաժնում, որն ունի «Աշխատությունների մատենագիտություն» խորագիրը, զետեղված են, ինչպես արդեն ասացի, Վազգեն Վեհափառի խնկելի գրչի արգասիքը հանդիսացող ինքնուրույն և թարգմանական բոլոր հոդվածները, բայց այստեղ էլ, իմ նախորդների՝ այդ բաժինների համեմատությամբ, տարբերությունը զգալի է։ Բերեմ երկու օրինակ՝ 1938 թվականին Բուխարեստի «Հայ մամուլ» շաբաթաթերթում հրատարակված Կարապետ Պալճյանի հոդվածներից մեկն ունի «Սո՛ւտ է» խորագիրը։ Հասկանալի է, որ վերնագիրը ոչինչ չի ասում ոչ հոդվածի գաղափարական բովանդակության, և ոչ էլ նրանում արծարծված հարցերի մասին, ուստի նպատակահարմար համարեցի տալ փոքրիկ ծանոթություն-բացատրական։ Նույն այդ թվականին և նույն պարբերականում Կարապետ Պալճյանի հրատարակած մի այլ հոդված ունի «Իմ պատասխանը ՊԱՏ-ին» ընթերցողի համար անհասկանալի վերնագիրը։ Եվ հարկավոր էր, նախ՝ երկարատև պրպտումներ կատարել պարզելու համար, որ ՊԱՏ-ը պարոն Արտաշես Տիրացյանն է՝ ռումինահայ կրթական-մշակութային և հասարակական նշանավոր գործիչը, և ապա գեթ մի քանի խոսքով պարզաբանել, թե ինչն է եղել առիթը, որ հոդվածագիրը նպատակահարմար է գտել պատասխան հոդվածով հանդես գալ, այն էլ այդպիսի զարմանալի վերնագրով։ Սա էլ, որպես համառոտ ծանոթություն, տրված է հիշատակված հոդվածի տակ։

Նման բնույթի բացատրականներ, որևէ հոդված ավելի ըմբռնելի դարձնելու համար համապատասխան պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում՝ կատարված մեծ ու փոքր մեջբերումներ և այլն, բազմաթիվ են, և կարծում եմ, որ դրանից մեծապես շահել է «Մատենագիտությունը»։ Եվ, վերջապես վերջին՝ «Առանձին

ուսումնասիրություններ» ընդհանուր խորագիրը կրող բաժնում, բացի այն, որ Հայրապետական յուրաքանչյուր հրատարակված աշխատության առնչությամբ հաղորդված են մատենագիտական համապատասխան տեղեկություններ, ասենք՝ հրատարակության տեղը, թիվը, էջաքանակը, վերահրատարակությունները, թարգմանությունները և այլն, տրված է նաև նրանց ստեղծման գրական-բանասիրական պատմությունը: Այս էլ չկա իմ նախորդներից և ոչ մեկի աշխատություններում:

Հաղորդարար – Եվ բնական է, որ այդպիսի խորությամբ ու մանրակրկիտ կազմած գրքում կլինեն, անշուշտ, ուշագրավ նորույթներ, որոնք բացահայտվում են առաջին անգամ: Այդպե՞ս է:

Ս. Շտիկյան-Վանեցի – Թույլ տվեք բավարարվել ընդամենը մեկ օրինակով: 1956 թվականի մայիսի 12-ին, Ամենայն Հայոց Նորընտիր Կաթողիկոս Վազգեն Առաջինը մեկ ժամ տևող ընդունելության է արժանանում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Բուլգանինի մոտ: Այս փաստը նշելիս, առ այսօր ավելացվում էր հետևյալը. «Վազգեն Վեհափառը Բուլգանինին է ներկայացնում Մայր Աթոռի գործունեությունը բարելավելու վերաբերյալ յոթ կետից բաղկացած մի հուշագիր»: Իմ կազմած «Մատենագիտության» մեջ, սակայն, արված է նաև հետևյալ կարևոր հավելումը. «Վազգեն Կաթողիկոսը Նիկոլայ Բուլգանինին է ներկայացնում նաև մի այլ հուշագիր՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու առաջադրանքով»: Շատ աշխատանք պահանջվեց ինձնից մի քանի տողանոց այս հավելումը կատարել կարողանալու համար: Սրանից պարզ է դառնում, որ Վեհափառ Հայրապետը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը բարձրացրել էր դեռ 1956 թվականի մայիսին և այն էլ պետական-կառավարական ամենաբարձր մակարդակով: Այստեղ, ինչպես ասում են, համապատասխան մեկնաբանություններն ավելորդ են, և բնական է, որ իմ այս հավելումը ևս պետք է ունենար իր բացատրությունը, ինչը և արված է: Նման տիպի կարևոր լրացումներն ու ճշգրտումները իմ գրքում մեկից ավելի են: Այս բոլորի հետևանքով, ահա, իմ կազմած Տեր Տեր Վազգեն Ա. Կաթողիկոսի «Մատենագիտությունը», ներեցեք իմ անհամեստության համար, իրենով նշանավորում է համանման գործերի շարքում մի քայլ առաջ լինելու փաստը:

Հաղորդարար – Մեզ մնում է գիտական-ստեղծագործական և աշխատանքային նորանոր հաջողություններ ցանկանալ պարոն Սուրեն Շտիկյան-Վանեցուն։

Ս. Շտիկյան-Վանեցի – Շնորհակալություն։

1995 թ.